ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ԴԻՄՈՒՄՆԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16.06.2016 10:59

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատում կազմակերպվել էր «Սահմանադրական դատարան դիմումներ ներկայացնելու հետ կապված հմտություններ» թեմայով վերապատրաստման դասընթաց:
Դասընթացը վարել է դասախոս, ի.գ.թ. Նարինե Ալեքսանյանը:
Փաստաբանները, Սահմանադրական գանգատը որպես իրավունքների դատական պաշտպանության միջոց, ենթաթեմայի շրջանակներում քննարկել են Սահմանադրական դատարան դիմելու իրավունք ունեցող սուբյեկտների շրջանակը, քննության առարկա հանդիսացող հարցերը, Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի վերաբերյալ կայացվելիք որոշումները և դրանց իրավական հետևանքները, ինչպես նաև՝ այդ որոշումների կատարմանն առնչվող սկզբունքային որոշ հարցեր:
Վերապատրաստմանը հարցուպատասխանի առարկա են դարձել Սահմանադրական գանգատին ներկայացվող պահանջները, մասնավորապես՝ գանգատի կազմմանը ներկայացվող հիմնական և հատուկ պահանջները, Սահմանադրական դատարանի կողմից սահմանադրական անհատական դիմումների ընդունելիության վերաբերյալ ձևավորված պրակտիկան, ինչպես նաև սահմանադրական դիմումներում կրկնվող տիպիկ սխալները:
Դասընթացավարը մասնակիցների ուշադրությունն է հրավիրել Սահմանադրական դատարանում դատաքննության առանձնահատկություններին, հատկապես՝ գործի քննության փուլերին, դատարավարական կանոններին, ՍԴ-ում գործի վարման համար անհրաժեշտ գիտելիքներին:
Փաստաբանները մտքեր են փոխանակել Սահմանադրական դատարանի կողմից անհատական դիմումի վերաբերյալ կայացվող որոշումների և դրանց իրավական հետևանքների շուրջ:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })